Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական

Կանչված Աստծո կողմից և հաստատված մարդկանց կողմից

Որպես Եկեղեցու անդամներ մեզ հաճախ հրավիրում են հաստատել մարդկանց իրենց կոչումներում ծառայելու համար: Տարիներ առաջ 18 տարեկան մի ուսանող ցույց տվեց ինձ, թե ինչ է նշանակում Տիրոջ ծառային հաստատելը: Ես մինչև այժմ օրհնված եմ նրա խոնարհ օրինակով:

Նա նոր էր սկսել քոլեջի իր առաջին տարին: Նա մկրտվել էր մի մեծ համալսարանում իր կրթությունը սկսելու համար տանից մեկնելուց մոտ մեկ տարի առաջ: Այնտեղ ես ծառայում էի որպես նրա եպիսկոպոս:

Երբ ուսումնական տարին սկսվեց, ես մի կարճ հարցազրույց ունեցա նրա հետ եպիսկոպոսի գրասենյակում: Ես շատ բան չեմ հիշում այդ առաջին զրույցից, բացի նրանից, որ նա խոսեց նոր վայրում իր դժվարությունների մասին, սակայն ես երբեք չեմ մոռանա մեր երկրորդ զրույցը:

Նա խնդրեց, որ հանդիպեմ իր հետ իմ գրասենյակում: Ես զարմացա, երբ նա ասաց. «Կարո՞ղ ենք միասին աղոթել, և թույլ կտա՞ք ես ասեմ աղոթքը»: Ես ուզում էի ասել, որ արդեն աղոթել էի և, կարծում էի, որ նա էլ էր արդեն աղոթել: Փոխարենը ես համաձայնվեցի:

Նա սկսեց իր աղոթքը վկայությամբ, որ գիտեր, որ եպիսկոպոսը կանչված էր Աստծո կողմից: Նա խնդրեց Աստծուն ասել ինձ, թե ինչ պիտի ինքն աներ հոգևոր մեծ կարևորություն ունեցող խնդրի առնչությամբ: Երիտասարդն ասաց Աստծուն, որ ինքը վստահ էր, որ եպիսկոպոսն արդեն իսկ գիտեր իր կարիքները և որ նրան կտրվեր այն խորհուրդը, որը նա կարիք ուներ լսելու:

Մինչ նա խոսում էր, որոշակի վտանգներ, որոնց առջև նա կկանգներ, եկան իմ մտքում: Խորհուրդը շատ պարզ էր, սակայն տրված մեծ հստակությամբ՝ միշտ աղոթիր, հնազանդվիր պատվիրաններին և մի վախեցիր:

Այդ երիտասարդը, որ մեկ տարի էր Եկեղեցում, սովորեցրեց օրինակով, թե ինչ կարող է անել Աստված ղեկավարի հետ, որը հաստատվում է նրանց հավատքով ու աղոթքներով, ում նա կանչված է առաջնորդելու: Այդ երիտասարդը ինձ ներկայացրեց Եկեղեցու ընդհանուր համաձայնության օրենքը (տես ՎԿՈՒ 26.2): Չնայած, որ Տերը կանչում է Իր ծառաներին հայտնությամբ, նրանք կարող են գործել միայն այն բանից հետո, երբ հաստատվում են նրանց կողմից, ում կանչված են ծառայելու:

Մեր հաստատող քվեարկությամբ մենք կարևոր խոստումներ ենք տալիս: Մենք խոստանում ենք աղոթել Տիրոջ ծառաների համար և որ Նա կառաջնորդի և կամրացնի նրանց (տես ՎԵՈՒ 93.51): Մենք պարտավորվում ենք, որ կփնտրենք և կակնկալենք ոգեշնչում Աստծուց նրանց խորհրդում և ցանկացած դեպքում, երբ նրանք գործեն իրենց կոչումներում (տես ՎԵՈՒ 1.38):

Այդ խոստումը պետք է հաճախակի նորոգվի մեր սրտերում: Կիրակնօրյա դպրոցի ձեր ուսուցիչը կփորձի ուսուցանել Հոգով, սակայն ճիշտ ինչպես դուք կարող էիք անել, ձեր ուսուցիչը կարող է սխալներ թույլ տալ դասարանի առջև: Դուք, ինչևիցե, կարող եք որոշել լսել և սպասել պահերին, երբ կկարողանաք զգալ ոգեշնչումը: Ժամանակի ընթացքում դուք կնկատեք ավելի քիչ սխալներ և ավելի հաճախ կրկնվող վկայություն, որ Աստված աջակցում է այդ ուսուցչին:

Երբ մենք ձեռք ենք բարձրացնում անձնավորությանը հաստատելու համար, մենք պարտավորվում ենք աշխատել Տիրոջ որ նպատակի համար էլ որ այդ անձնավորությունը կանչված է իրագործելու: Երբ մեր երեխաները փոքր էին, կինս մեր ծխում կանչվել էր ուսուցանելու փոքր երեխաներին: Ես ոչ միայն բարձրացրեցի իմ ձեռքը նրան հաստատելու համար, այլ նաև աղոթեցի նրա համար և այնուհետև թույլատվություն խնդրեցի նրան օգնելու համար: Երեխաների համար կանանց աշխատանքի և Տիրոջ սիրո վերաբերյալ իմ ստացած դասերը շարունակում են օրհնել իմ ընտանիքին և իմ կնոջը:

Վերջերս ես խոսեցի այն երիտասարդի հետ, ով հաստատել էր իր եպիսկոպոսին տարիներ առաջ: Ես իմացա, որ Տերը և մարդիկ հաստատել էին նրան որպես միսիոներ, որպես ցցի նախագահ և որպես հայր: Մեր զրույցի վերջում նա ասաց. «Ես շարունակում եմ աղոթել ձեր համար ամեն օր»:

Մենք կարող ենք որոշել ամեն օր աղոթել մեկի համար, ով կանչված է Աստծուց մեզ ծառայելու համար: Մենք կարող ենք շնորհակալություն հայտնել մեկին, ով օրհնել է մեզ իր ծառայությամբ: Մենք կարող ենք որոշել արձագանքել, երբ մեր կողմից հաստատված մեկը կամավորներ է խնդրում:[1]

Նրանք, ովքեր աջակցում են Տիրոջ ծառաներին Իր թագավորությունում, կաջակցվեն Նրա անսահման զորությամբ: Մեզ բոլորիս էլ պետք է այդ օրհնությունը:

ՀՂՈՒՄ

1. Տես *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* (1998), 211–12:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Ուղերձով կիսվելուց հետո կարդացեք հետևյալ մեջբերումը. «Տերը ձեզ Իր ձեռքի գործիքը կդարձնի, եթե դուք խոնարհ եք, հավատարիմ և ջանասեր: . . . Դուք կստանաք ավելի մեծ ուժ, երբ դուք հաստատվեք ժողովրդի կողմից և ձեռնադրվեք» (*Teaching, No Greater Call* [1999], 20): Թող ընտանիքը հավաքվի մի ծանր առարկայի շուրջ և խնդրեք մի հոգու փորձել այն բարձրացնել: Հրավիրեք ընտանիքի մյուս անդամներին հերթով մոտենալ և օգնել բարձրացնել առարկան: Քննարկեք, թե ինչ է տեղի ունենում, երբ բոլորը օգնում են: Հատուկ ուշադրություն դարձնելով Նախագահ Այրինգի խորհրդին, քննարկեք արդյունավետ միջոցները, որոնցով մենք կարող ենք աջակցել ուրիշներին իրենց կոչումներում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Կիրակնօրյա դպրոցի իմ ուսուցչի շնորհիվ

Անանուն

Կիրկնօրյա դպրոցի իմ դասարանը միշտ չէ ակնածալից լինում: Ես սիրով եմ դասը լսում ամեն շաբաթ, սակայն երբեմն թվում է, թե մյուսներն իմ դասարանում կարծես հաճույքով չեն լսում դասը: Հաճախ նրանք խոսում են իրար հետ կամ խաղեր են խաղում էլեկտրոնային սարքերով, մինչ մեր ուսուցիչը փորձում է սովորեցնել մեզ: Ցավոք սրտի, ես երբեմն գտնում եմ, որ ինքս եմ խնդրի մի մասը:

Մի շաբաթ մենք սովորականից ավելի վատ պահեցինք մեզ, և դասի վերջում մեր ուսուցիչը նույնիսկ արտասվեց, որովհետև ոչ ոք չէր լսում նրա դասը: Մինչ մենք դուրս էինք գալիս դասարանից, իմ սիրտը ցավում էր նրա համար:

Հաջորդ կիրակի մեր ուսուցչուհին ասաց, որ նա այդ շաբաթ շատ էր աղոթել և առաջնորդություն փնտրել, և նրա մոտ միտք էր ծագել, որ նա պետք է մեզ Եկեղեցու մի ֆիլմ ցույց տար: Նա միացրեց ֆիլմը, որը Հիսուս Քրիստոսի կյանքի և Նրա կատարած հրաշքների մասին էր:

Երբ ես այդ երեկո մտածում էի այդ ֆիլմի մասին, ինչ-որ յուրահատուկ բան զգացի: Հանկարծ ես հասկացա, որ ես զգում էի Հոգին ավելի շատ, քան երբևէ նախկինում: Ես անմիջապես որոշեցի, որ ուզում էի փոփոխություններ կատարել իմ կյանքում Փրկչին ավելի նմանվելու համար և հասկացա, որ այդ օրը կիրակնօրյա դպրոցում ունեցած փորձառությունը մեծապես ամրացրել էր իմ վկայությունը: Ես շատ երախտապարտ եմ կիրակնօրյա դպրոցի իմ ուսուցչին ամեն ինչի համար, որ նա անում է մեր դասարանի համար ամեն շաբաթ:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *First Presidency Message, June 2012* -ի թարգմանությունը: Armenian. 10366 201

Այցելությամբ ուսուցում՝ սուրբ հանձնարարություն

Ուսումնասիրեք այս նյութը և, ինչպես հարմար է, քննարկեք այն քույրերի հետ, ում դուք այցելում եք: Օգտագործեք հարցերը, որոնք կօգնեն ձեզ ամրացնել ձեր քույրերին և Սփոփող Միությունը դարձնել ձեր սեփական կյանքի ակտիվ մասը:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Որպես այցելող ուսուցիչներ մենք կարևոր հոգևոր առաքելություն ունենք կատարելու: «Եպիսկոպոսը, ով ծխի կարգված հովիվն է, չի կարող հետևել Տիրոջ բոլոր ոչխարներին միաժամանակ: Նա հենվում է ներշնչում ունեցող և Իրեն օգնող այցելող ուսուցիչների վրա»:[1] Հայտնություն փնտրելն ու ստանալը այն հարցի շուրջ, թե ում պետք է տրվի յուրաքանչյուր քրոջը հետևելու պարտականությունը, շատ կարևոր է:

Ոգեշնչումը սկսում է գալ, երբ Սփոփող Միության նախագահության անդամները աղոթքով քննարկում են անհատների և ընտանիքների կարիքները: Այնուհետև, եպիսկոպոսի թույլտվությամբ Սփոփող Միության նախագահությունը հանձնարարություն է տալիս այն ձևով, որ օգնում է քույրերին հասկանալ, որ այցելությամբ ուսուցումը կարևոր հոգևոր պարտականություն է:[2]

Այցելող ուսուցիչները անկեղծորեն սկսում են ճանաչել և սիրել յուրաքանչյուր քրոջ, օգնել նրան ամրացնել իր հավատքը և ծառայություն մատուցել անհրաժեշտության դեպքում: Նրանք անձնական ոգեշնչում են փնտրում իմանալու համար, թե ինչպես արձագանքեն յուրաքանչյուր քրոջ հոգևոր և նյութական կարիքներին, ում այցելում են:[3]

«Այցելությամբ ուսուցումը դառնում է Տիրոջ աշխատանքը, երբ մենք կենտրոնանում ենք ոչ թե տոկոսների, այլ մարդկանց վրա: Իրականում, այցելությամբ ուսուցումը երբեք չի ավարտվում: Դա ավելի շուտ ապրելաձև է, քան աշխատանք»:[4]

Սուրբ գրություններից

Մատթեոս ԻԲ.36-40, Հովհաննես ԺԳ.34-35, Ալմա 37.6-7

Մեր պատմությունից

Էլայզա Ռ. Մնոուն՝ Սփոփող Միության երկրորդ գերագույն նախագահը, ուսուցանել է. «Ուսուցչի աշխատանքը ես համարում եմ բարձր և սուրբ աշխատանք»: Նա խորհուրդ է տվել այցելող ուսուցիչներին նախքան տներ այցելելը «լցված լինել Աստծո Հոգով, իմաստությամբ, համեստությամբ, սիրով», որպեսզի նրանք կարողանան պարզել և բավարարել ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական կարիքները: Նա ասել է. «Դուք կարող է զգաք, որ պետք է ասեք խաղաղության և մխիթարության խոսքեր, և եթե դուք գտնեք մի սառնություն զգող քրոջը, սեղմեք նրան ձեր սրտին, ինչպես ձեր գիրկը կառնեիք մի երեխայի, և տաքացրեք նրան»:[5]

Եթե մենք առաջ գնանք հավատքով, ինչպես վաղ շրջանի Սփոփող Միության քույրերն արեցին, մենք կունենանք Սուրբ Հոգին մեզ հետ և կոգեշնչվենք իմանալու, թե ինչպես օգնենք յուրաքանչյուր քրոջ, ում մենք այցելում ենք: «Եկեք փնտրենք իմաստություն զորության փոխարեն,- ասել է քույր Մնոուն,- և մենք կունենանք ողջ զորությունը, որը գործածելու համար իմաստություն ունենք»:[6]

ՀԴՈՒՄՆԵՐ

1. Ջուլի Բ. Բեք, «Սփոփող Միություն՝ սուրբ աշխատանք», *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 110:
2. Տես Handbook *2:* Administering the Church (2010), 9.5; 9.5.2:
3. Տես *Ձեռնարկ 2,* 9.5.1:
4. Ջուլի Բ. Բեք, *Լիահոնա,* Նոյեմբեր 2009, 114:
5. Էլայզա Ռ. Մնոու, *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 108:
6. Էլայզա Ռ. Մնոու, *Իմ արքայության դուստրերը,* 45–46:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Ինչպե՞ս կարող եմ կատարելագործել որպես այցելող ուսուցիչ իմ կարևոր պարտականությունը կատարելու հմտությունը:

2. Որպես այցելող ուսուցիչ ինչպե՞ս ես կարող եմ օգնել մյուս քույրերին կատարելու այցելող ուսուցիչների իրենց պարտականությունը:

Լրացուցիչ տեղեկության համար, այցելեք www.reliefsociety.lds.org:

© 2012 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/11: Թարգմանության հաստատումը. 6/11: *Visiting Teaching Message, June 2012* -ի թարգմանությունը: Armenian. 10366 201